

Մրցույթի հայտարարություն

<<Վայոց Ձորի մարզի Հորքատեղի հիմնական դպրոց Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ ՀՀ Վայոց ձորի մարզի <<Արտաբույնքի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի, <<Եղեգիսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Հորքատեղի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կուլեգիալ կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են <<Հորքատեղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում

2021 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 15 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰ -ից մինչև ժամը 15⁰⁰ -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 29 -ին՝ ժամը 12⁰⁰ -ին,

<<Հորքատեղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում: Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Հորքատեղ բնակավայր, կենտրոնական փողոց, շենք 7

Տեղեկությունների համար զանգահարել 099 2261111 հեռախոսահամարով: Էլփոստ՝ horbategh@schools.am